# Հայկական Հանրապետութեան Գիտութիւնների

# Ակադեմիայի նոր անդամները

Հանրապետութեան գիտական կեանքում մեծ իրադարձութիւն են Գիտութիւնների Ակադեմիայի ընտրութիւնները: Հայաստանի գիտական մտքի առաջատար կենտրոնը համալրւում է այնպիսի գիտնականներով, որոնք նշանակալից աւանդ են ներդրել գիտատեխնիկական առաջընթացի մէջ, իրենց դրսեւորել որպէս գիտութեան տարբեր բնագաւառների խոշոր մասնագէտներ:

Հայկական Հանրապետութեան Գիտութիւնների Ակադեմիայի կողմում ընտրուեցին 7 իսկական անդամ եւ 12 թղթակից անդամ:

Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի ակադեմիկոսներ ընտրուեցին՝

Գրիգոր Մարգարի ՂԱՐԻԲԵԱՆԸ (ֆիզիկա) — ֆիզիկա-մաթեմատիկական գիտութիւնների դոկտոր, ՍՍՀՄ ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտէի Երեւանի Ֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատանոցի վարիչ.

Բենիամին Եղիշէ ՍԱՐԳՍԵԱՆԸ (աստղագիտութիւն) — ֆիզիկա-մաթեմատիկական գիտութիւնների թեկնածու, Բիւրականի աստղադիտարանի բաժնի վարիչ.

Արմէն Լեւոնի ԹԱԽՏԱՋԵԱՆԸ (բուսաբանութիւն) — կենսաբանական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՍՍՀՄ Գիտութիւնների Ակադեմիայի Կոմարովի անուան բուսաբանութեան ինստիտուտի գիտաշխատանոցի վարիչ.

Միքայէլ Քրիստափորի ՉԱՅԼԱԽԵԱՆԸ (բոյսերի ֆիզիոլոգիա) — ՍՍՀՄ Գիտութիւնների Ակադեմիայի իսկական անդամ, կենսաբանական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՍՍՀՄ Գիտութիւնների Ակադեմիայի բոյսերի ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտաշխատանոցի վարիչ.

Գէորգ Բագրատի ՂԱՐԻԲՋԱՆԵԱՆԸ (նոր եւ նորագոյն պատմութիւն) — պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՍՄԿԿ կենտկոմին առընթեր Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճիւղի տնօրէն.

Լեւոն Ստեփանի ԽԱՉԻԿԵԱՆԸ (հին եւ միջին դարերի պատմութիւն) — պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի տնօրէն.

Գուրգէն Գրիգորի ՍԵՒԱԿԸ Գրիգորեան), (լեզուաբանութիւն) — բանասիրական գիտութիւնների դոկտոր, Երեւանի Պետական համալսարանի պրոֆեսոր.

Հայկական Հանրապետութեան Գիտութիւնների Ակադեմիայի թղթակից անդամներ են դարձել՝

Էմիլ Հայկի ՄԻՐԶԱԲԵԿԵԱՆԸ (կառավարական պրոցեսներ) —ֆիզիկա-մաթեմատիկական գիտութիւնների թեկնածու, Հանրապետութեան գիտութիւնների ակադեմիայի ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրէն.

Ֆադէյ Տաճատի ՍԱՐԳՍԵԱՆԸ (կառավարական պրոցեսներ) — տեխնիկական գիտութիւնների թեկնածու, Հայաստանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազօտական ինստիտուտի տնօրէն.

Բենիամին Լեւոնի ԱԲՐԱՀԱՄԵԱՆԸ (չինարարական մեխանիկա) — ֆիզիկա-մաթեմատիկական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Հայկական Հանրապետութեան Գիտութիւնների Ակադեմիայի մաթեմատիկայի եւ մեխանիկայի ինստիտուտի բաժնի վարիչ.

Արմէն Անուշաւանի ԳԱԼՈՅԵԱՆԸ (ֆիզիոլոգիապէս ակտիվ միացութիւնների քիմիա) — կենսաբանական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Գիտութիւնների Ակադեմիայի բիոքիմիայի ինստիտուտի տնօրէնի տեղակալ.

Սարգիս Համբարձումի ՎԱՐԴԱՆԵԱՆԸ (ֆիզիոլոգիապէս ակտիվ միացութիւնների քիմիա) — քիմիական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Հանրապետութեան գիտութիւնների ակադեմիայի Ա. Մնջոյեանի անուան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրէն.

Լեւոն Միքայէլի ՋԱՆՓՈԼԱԴԵԱՆԸ (գիւղատնտեսական գիտութիւններ) — տեխնիկական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Հայկական Հանրապետութեան գիւղատնտեսութեան մինիստրութեան խաղողագործութեան, գինեգործութեան եւ պտղաբուծութեան ինստիտուտի բաժնի վարիչ.

Արտաշէս Ալեքսանդրի ՄԱԹԵՒՈՍԵԱՆԸ (գիւղատնտեսական գիտութիւններ) — գիւղատնտեսական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, գիւղատընտեսական ինստիտուտի ամբիոնի վարիչ.

ՍՏԱՄԲՈՒԼՑԵԱՆԸ (բժշկական գիտութիւններ) — բժշկական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Հայկական Հանրապետութեան առողջապահութեան մինիստրութեան սրտաբանութեան եւ սրտի վիրաբուժութեան ինստիտուտի բաժնի վարիչ.

Անդրանիկ Բախշիի ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԸ (աշխարհագրութիւն) — աշխարհագրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի երկրաբանական գիտութիւնների ինստիտուտի աշխարհագրութեան բաժանմունքի վարիչ.

Գալուստ Անուշաւանի ԳԱԼՈՅԵԱՆԸ (նոր եւ նորագոյն պատմութիւն) — պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի պատմութեան ինստիտուտի տնօրէն.

Վաչէ Սմբատի ՆԱԼԲԱՆԴԵԱՆԸ (գրականութիւն) — բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Հանրապետութեան գիտութիւնների Ակադեմիայի Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտի տնօրէն:

Գէորգ Աբէլի ԲՐՈՒՏԵԱՆԸ (փիլիսոփայութիւն) — փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, Երեւանի Պետական համալսարանի ամբիոնի վարիչ:

(ՀՀԳ-ի Լրատուիչէն)


«ԶԱՐԹՕՆՔ»
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆԸ

| | |
|---|---|
| Լիբանան՝ | 40 Լ. Ո. |
| Սուրիա՝ | 55 Ս. Ո. |

# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Հանրապետության գիտական կյանքում մեծ իրադարձություն են գիտությունների ակադեմիայի ընտրությունները։ Հայաստանի գիտական մտքի առաջատար կենտրոնը համալրվում է այնպիսի գիտնականներով, որոնք նշանակալից ավանդ են ներդրել գիտատեխնիկական առաջընթացի մեջ, իրենց գործունեությունը ծավալում գիտության տարբեր բնագավառների խաչմերուկներում։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Երևանում կայացած ընդհանուր ժողովում ակադեմիայի կազմում ընտրվեց 7 իսկական անդամ և 12 թղթակից-անդամ։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ ընտրվեցին՝

Գրիգոր Մարգարի ՂԱՐԻԲՅԱՆ (ֆիզիկա) — ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, ՍՍՀՄ ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի Երևանի ֆիզիկայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ։

Բենիամին Եղիշեի ՄԱՐԳԱՐՅԱՆ (աստղագիտություն) — ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու, Բյուրականի աստղադիտարանի բաժնի վարիչ։

Արմեն Լևոնի ԹԱԽՏԱՋՅԱՆ (բուսաբանություն) — կենսաբանական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Կոմարովի անվան բուսաբանության ինստիտուտի լաբորատորիայի վարիչ։

Միքայել Քրիստափորի ՉԱՅԼԱԽՅԱՆ (բույսերի ֆիզիոլոգիա) — ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, կենսաբանական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի բույսերի ֆիզիոլոգիայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ։

Գևորգ Բագրատի ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ (նոր և նորագույն պատմություն) — պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի դիրեկտոր։

Լևոն Ստեփանի ԽԱՉԻԿՅԱՆ (հին և միջին դարերի պատմություն) — պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի դիրեկտոր։

Գուրգեն Գրիգորի ՍԵՎԱԿ (ԳՐԻԳՈՐՅԱՆ), (լեզվաբանություն) — բանասիրական գիտությունների դոկտոր, Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամներ են դարձել՝

Էմիլ Հայկի ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ (կառավարման պրոցեսներ) — ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու, Հանրապետության գիտությունների ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի դիրեկտոր։

Յուրի Տաճատի ՍԱՐԳՍՅԱՆ (կառավարման պրոցեսներ) — տեխնիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր։

Բենիամին Լևոնի ԱԲՐԱՀԱՄՅԱՆ (կիրառական մեխանիկա) — ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի բաժնի վարիչ։

Արմեն Անուշավանի ԳԱԼՈՅԱՆ (ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների քիմիա) — կենսաբանական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի բիոքիմիայի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ։

Սարգիս Համբարձումի ՎԱՐԴԱՆՅԱՆ (ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների քիմիա) — քիմիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Հանրապետության գիտությունների ակադեմիայի Ա. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի դիրեկտոր։

Լեոն Միքայելի ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ (գյուղատնտեսական գիտություններ) — տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության ինստիտուտի բաժնի վարիչ։

Առաքել Ալեքսանդրի ՄԱԹԵՎՈՍՅԱՆ (գյուղատնտեսական գիտություններ) — գյուղատնտեսական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտի ամբիոնի վարիչ։

Ռաֆայել Պարույրի ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ (բժշկական գիտություններ) — բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Հայկական ՍՍՀ առողջապահության մինիստրության սրտաբանության և սրտի վիրաբուժության ինստիտուտի բաժնի վարիչ։

Անդրանիկ Բախշիի ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (աշխարհագրություն) — աշխարհագրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Հայաստանի գիտությունների ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի աշխարհագրության սեկտորի վարիչ։

Գալուստ Անուշավանի ԳԱԼՈՅԱՆ (նոր և նորագույն պատմություն) — պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտոր։

Վաչե Սմբատի ՆԱԼԲԱՆԴՅԱՆ (գրականագիտություն) — բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Հանրապետության գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի դիրեկտոր։

Գևորգ Աբելի ԲՐՈՒՏՅԱՆ (փիլիսոփայություն) — փիլիսոփայական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչ։

(227)